# ԲԱՆԱՍԷՐ

## ԱՄՍԱԹԵՐԹ
## ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

| Է ՏԱՐԻ 1905 | Տարեկան՝ 15 ֆր. = 6 ռբլ. = 3 դոլար. | ՍԵՊՏԵՄԲԵՐ Թիւ 9 |
|---|---|---|

## ԱՆԻԻ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ

Կատարեցաւ

Ստացայ 25-ին Օգոստոսի

Արժանապատիւ Տէր-Մինաս քհնյ փոխ-նախագահ Հոգաբարձական ժողովոյն Անւոյ.

Նախ զմեզ յուսադրեցին թէ՝ քանի անձինք կ'խոստանան 200-ական րուբլի նուիրել Անւոյ. երբ շինութեան ձեռնարկուի, որուն համար եւ մեք ձեռն ի գործ եղանք.

Անցեալ ամառ նամակաւ 500 րուբլի անհրաժեշտ լինելին ծանուցինք Յովհաննէսեանց Մեծ. Յարութիւն աղային. այն մասին նա գրով խոստացաւ, կամ ուղարկել, եւ կամ անձամբ բերել յԱնի. մենք ի զուր սպասեցինք ցայսօր.

Անցեալ ամառ սկսման ձախող դէպք զիրենք բոլորովին շփոթեց — բայց այնպէս ընել պէտք չէր, փոքր ոգիութեան տեղի տալու չենք, որով գործերնիս երեսի վրայ Թ.այ. Շաբաթ միայն 50 րուբլիի պէտք ունիմք քար եւ հող կրող սայլորդաց եւ աշխատող սարակաց տալու. Թող զայս շինութեան պատեր կը բարձրանան հետզհետէ ուստի եւ շէնքի ծածկոյթի համար փայտ եւ այլ պիտոյքները հարկէ շաբաթ մը առաջ առնելու համար 500 րուբլի առ ձեռն ունենալ.

Թէպէտ ուրիշ տեղերէ փող պիտի գայ, բայց թերեւս ուշ լինի շինութեան ժամանակ անցնելէն զկնի. ուստի կառաջարկեմ ժողովոյդ

digitised by A.R.A.R.@

500 րուբլի անմիջապէս ուղարկել մեզ. ինչպէս որ պարոն Ցօհանջան-
եանց խոստացած է մեզ ընելով, թէ որ հանգամանկութեամբ այլ չդոյա-
նայ, տեղէ մը փոխ կառնում կը դրկեմ։ Հոգացէք, որ ծաղր չ'լինինք։

Պէտք են եւ հետեւեալքն. —

4 հատ վէտր.

5 » մեծ փէնճէրէ (լուսամուտի վանդակ) յառաջուց գրկուած հինգ
հատի մեծութեամբ. ասոնցմէ մէկ հատն առանց փայտէ կողքերու լինի,
որ փողոցի դրան վերեւ պիտի դնեմք, իւր երկայնութեան վրայ պառ-
կեցնելու կերպով։ Զկարծէք թէ մեծ կլինի, զի բակն շատ երկար ե-
րեւալուն համար շատ լուսի պէտք կայ։

4 հատ եւս փէնճէրէ, 1 հոլապի լայն, 1 ու կէս հոլապ՝ երկայն.

3 հատ եւս փէնճէրէ 2 ջարէք լայն 3 ջարէք երկայն. երբ ասոնք
կ'պատրաստուին, գրեցէք թէ քանի՞ տալ պէտք է, որ կ'ղրկեմք այս
տեղ փոխադրելու։

Ասոնք շուտով դրկուելու է, զի այստեղ ձմեռն շուտ կլինի։

Գրիգորիս Եպիսկոպոս Աղուանեանց

Թիւ 9. Օգոստ'' 23 · 1879

Անի

Դոների եւ լուսամուտների բոլոր շրջանակ-
ները իւրեանց պարագաներով պատրաստու-
եցան եւ ուղարկուեցան 5-ին Սեպտեմբ.''

25-ին Օգոստոսի 1879 ամի։ Ըստ որում Կարուց Սրբազան առաջնորդ
Գրիգորիս Եպիսկոպոս Աղուանեանը իւր ամսոյս 23-ի N 9 գրութ-
եամբ պահանջել էր Անիում շինուելիք սենեակների համար տասն
երկու հատ մեծ եւ փոքր լուսամուտների եւ վեց հատ դոների հա-
մար շրջանակներ հարկաւոր երկաթեղէններով, ուստի որոշուեցաւ Նո-
րին սրբազնութեան սկսած գործին ըստ կարի ձեռնտու լինելու համար՝
հանգամանկութեամբ պատրաստել նոյն հարկաւորեալիքները եւ ուղար-
կել։ Իսկ ինչ վերաբերում է հինգ հարիւր րուբլի դրամին, որը սրբա-
զանն «անմիջապէս» պահանջում էր իւր նոյն գրութեամբ, որոշուեցաւ
յայտնել, որ ձեռնհաս չենք մի այդպիսի նշանաւոր գումար մեկէն ու-
ղարկել իրան։

digitised by A.R.A.R.@

կատարեցաւ։

Ստացայ 17-ին Սեպտեմբ՝՝

Արժանապատիւ Տէր Մինաս քհնյ փոխ Նախագահ
Հողաբաշխական ժողովոյն Անւոյ

Անւոյ չինութիւնը Կարուց Նահանգապետի կողմից արգիլուեցաւ. առանց գրաւոր տեղեկութիւն տալու մեզ, որուն համար եւ մենք անդիմագրեցինք Նահանգապետին չինութեան պատճառներ. բայց նա չը պատասխանեց մեզ. ուստի եւ ես մտադիր եմ չինութիւնը առաջ հասցնելու ինչպէս որ գրած եմ Ներսէս Եպիսկոպոսին եւ Նահանգապետին գրածս նոյն գրութեան ծոց դրած եմ որ հաղորդէ Վեհափառ Հայրապետին. բայց չինութեան համար ծախսի սակ չունիմ, մանաւանդ որ ես իմ կողմանէ երեք հարիւր մանէթի չափ ծախս արած Անւոյ եկած եկամուտներէն զատ։ Ուստի գրովս կառաջարկեմ ժողովոյդ որ քանի մի հարիւր մանէթ ղրկէք. եւ այս մասին էլ Արժանապատիւ Ներսէս Վարդապետին գրեցի որ պարագայիւք տեղեկացնէ ձեզ. եթէ սակ ղրկելու չ'լինիք չէնքը երեսի վրայ կ'մնայ եւ եղած ծախսերն ալ 'ի զուր կը փչանայ։

Նահանգապետին գրած գրիս օրինակը որ դրած եմ Ներսէս Եպիսկոպոսի նամակի ծոցը. կը խնդրեմ որ մաքուր թղթի վերայ օրինակէք զայն յիշեալ Եպիսկոպոսի գրի ծոց դնելով փոշտայով ղրկէք 'ի Վաղարշապատ. տեղս մաքուր թուղթ չ'կար որ օրինակել տայի։

Մնամ աղօթարար Ազգիս Գրիգորիս
Եպիսկոպոս Կարուց

N 16
Ի 15-ն Սեպտեմբերի
1879 ամի
'ի Ղօշավանք։

digitised by A.R.A.R.@